



**«Ներդաշնակ հասարակություն»  
սոցիալական աշխատողների ասոցիացիա, ՀԿ  
Գործունեության և գույքի օգտագործման մասին հաշվետվություն  
2016-2017 թթ.**

2017 թվականի նոյեմբերի 13-ին կայացած Խորհրդի նիստում ներկայացնելով 2016-2017թթ.-ին «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիայի (այսուհետ՝ Ասոցիացիա) գործունեության հաշվետվությունը՝ Ասոցիացիայի նախագահ Միրա Անտոնյանը նշեց, որ իրականացված աշխատանքները բխել են 2015թ.-ի Կազմակերպության վարչության կողմից հաստատված Ռազմավարությունից և Գործողությունների ծրագրից և իրականացված աշխատանքները հիմնականում համապատասխանել են նախապես պլանավորված գործողություններին:

Ասոցիացիայի կողմից իրականացված գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում կարելի է տարանջատել երեք հիմնական ուղղությունների, որոնք են՝

1. Ամրապնդել և զարգացնել ՄԱՀԱ-ի կազմակերպական կարողությունները,
2. Աջակցություն ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի ընթացիկ բարեփոխումներին,
3. Համագործակցության ամրապնդում ազգային և միջազգային հարթակներում:

**Ամրապնդել և զարգացնել ՄԱՀԱ-ի կազմակերպական կարողությունները.**

Հաշվետու ժամանակահատվածում, Ասոցիացիան ակտիվորեն ներգրավված է եղել դրամաշնորհային ծրագրերում, մասնավորապես այս ընթացքում Ասոցիացիայի կողմից իրականացվել են մի քանի խոշոր դրամաշնորհային ծրագրեր, որոնց իրականացումը նպաստել է ոչ միայն Ասոցիացիայի ընթացիկ գործունեության կայունության պահպանմանն ու ներքին կարողությունների զարգացմանը, այլև դրանք իրենց նպատակների տեսանկյունից անպայմանորեն ունեցել են ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներին աջակցության և սոցիալական

աշխատողների կարողությունների զարգացման բաղադրիչներ: Մասնավորապես, իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- **«Սոցիալական աշխատողների ջանքերը Արևելյան գործընկերության երկրներում հանուն կայուն սոցիալական փոփոխությունների»** տարածաշրջանային ծրագիրը, որը միաժամանակ իրականացվում է ՀՀ-ում, Վրաստանում, Մոլդովայում և Ադրբեջանում և նպատակ է հետապնդում նպաստել սոցիալական ծառայությունների մասնագիտացմանն ու արդյունավետ սոցիալական բարեփոխումների իրականացմանը արևելյան գործընկերության երկրներում՝ զարգացնելով տեղի սոցիալական աշխատողների ասոցիացիաների կարողությունները: Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի, Ավստրիական զարգացման գործակալության և Հիլֆսվերկ Ավստրիա կազմակերպության կողմից: Ծրագրի շրջանակներում մշակվել են սոցիալական պաշտպանության ոլորտում մի շարք ուղղորդման մեխանիզմներ, հայեցակարգեր, բացի այդ հենց ծրագրի շրջանակներում է մշակվել «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Սույն ծրագրի կարևորագույն բաղադրիչներից հաջորդը՝ «Համագործակցություն հանուն ընտանիքների ամրապնդման» Ենթադրամաշնորհային ծրագիրն էր, որի շրջանակներում Ասոցիացիան ՀՀ մարզերում գործող 11 կազմակերպությունների տրամադրել է ենթադրամաշնորհներ՝ մարզերում սոցիալական ծառայությունների նոր մոդելների մշակման, սոցիալական աշխատանքի ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովման նպատակով: Ծրագիրն իրականացվելու է մինչև 2018թ.-ի ապրիլ:

- **«Գործենք միասին՝ հանուն Հայաստանում ավելի կայուն սոցիալական պետության»** ծրագիրը, որի հիմնական նպատակը ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի բարելավմանը նպաստելն է՝ ապահովելով ընթացիկ ոլորտային բարեփոխումներում (սոցիալական ծառայություններ, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանություն և ընտանեկան բռնության կանխարգելում) քաղաքացիների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների արդյունավետ մասնակցությունը: Ծրագրի շրջանակներում շարունակական հիմունքներով իրականացվում են ՔՀԿ-ների, սոցիալական աշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ, մշակվում են բարեփոխումները լուսաբանող ձեռնարկներ, ինչպես նաև մի շարք ոլորտային հետազոտություններ: Ծրագիրը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի կողմից և իրականացվելու է մինչև 2019թ.:

- **«Համայնքային սոցիալական աշխատողի աշխատանքի մեթոդաբանության, պաշտոնի անձնագրի և մասնագիտական գիտելիքների ստուգման հարցաշարի կազմում»** ծրագիր, որի նպատակն էր արձագանքելով 5000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում սոցիալական աշխատողի հաստիքի ներդրման պետականորեն սահմանված պահանջին՝ մշակել համայնքային սոցիալական աշխատողին ներկայացվող պահանջները, աշխատանքի մեթոդաբանությունն ու նկարագիրը՝ սոցիալական պաշտպանության համակարգի ներկա բարեփոխումների համատեքստում: Ծրագիրը ֆինանսավորվում է Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության կողմից:
- **«Երևանի, Կապանի և Վանաձորի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների մասնագետների համար դասընթացների փաթեթների մշակում»** ծրագիր, որի շրջանակներում վերակազմակերպված Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների մասնագետների համար Ասոցիացիայի փորձագետների կողմից մշակվել են դասընթացների ձեռնարկներ չորս հիմնական ուղղություններով՝ սոցիալական աշխատանք, սոցիալական մանկավարժություն, հատուկ մանկավարժություն և հոգեբանություն: Ծրագիրն իրականացվել է 2017թ.-ի հուլիս-օգոստոս ամիսներին «Խոցելի երեխաների սոցիալական ներառում» ծրագրի շրջանակներում, Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության կողմից տրված Ենթադրամաշնորհի միջոցով:
- **«Երևանի, Կապանի և Վանաձորի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների մասնագետների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումների իրականացում»** ծրագիր, որի շրջանակներում վերակազմակերպված Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների մասնագետների համար Ասոցիացիայի փորձագետների կողմից իրականացվել են վերապատրաստումներ երկու հիմնական ուղղություններով, մի կողմից ուղղված առանձին կենտրոնների ներքին կարողությունների, այդ թվում ներքին հաղորդակցության, աշխատանքի կազմակերպման կարողությունների զարգացմանը, երկրորդ ուղղությամբ՝ առանձին մասնագիտական խմբերի (սոցիալական աշխատողներ, սոցիալական մանակավարժներ, հատուկ մանակավարժներ, հոգեբաններ) նեղ մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը: Ծրագիրն իրականացվել է 2017թ.-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Խոցելի երեխաների սոցիալական ներառում» ծրագրի շրջանակներում, Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության կողմից տրված Ենթադրամաշնորհի միջոցով:
- **«Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգում սուպերվիզորների աշխատանքների բարելավման մեթոդաբանական աջակցության ծառայությունների**

**իրականացում»** ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգում գործող սոցիալական ծառայությունների գործունեության վերլուծություն՝ սուպերվիզիային ներդրման հնարավորությունների և ռիսկերի գնահատման նպատակով և, ըստ այդմ, Ասոցիացիայի փորձագետների կողմից մշակվել և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է ներկայացվել ՀՀ Ինտեգրված սոցիալական ծառայություններում սուպերվիզիայի ներդրման մոդելը: Ծրագիրն իրականացվել է Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ, 2015-2016թթ. Ժամանակահատվածում:

- Հաշվետու Ժամանակահատվածում երկամսյա պարբերականությամբ հրապարակվել է «ՄԱՏԵ» տեղեկագիրը, որը հիմնադրվել է Ասոցիացիայի կողմից և անդրադառնում է սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներին, լուսաբանում է սոցիալական ծառայությունների գործունեությունը, նորությունները սոցիալական աշխատանքի միջազգային հարթակում, ինչպես նաև Ասոցիացիայի գործունեությունը:

## **Աջակցություն սոցիալական բարեփոխումների իրականացմանը**

Ասոցիացիան սոցիալական պաշտպանության բարեփոխումների իրականացմանն աջակցել է մի քանի հիմնական ուղղություններով.

- «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը և ընդունման ուղղությամբ շարունակական լոբբիստական աշխատանքների իրականացումը, այդ թվում աշխատանքային տարբեր խմբերում՝ պետական, ոչ պետական կառույցներում ներգրավված պրակտիկ սոցիալական աշխատողներ, ակադեմիական շրջանակ, քաղաքականություն մշակողներ և որոշումներ կայացնողներ, հանրային քննարկումների, ինչպես նաև Հանրային լսման կազմակերպում, որին ներկա էին նաև ԱՄՀ նախարարն ու ԱԺ նախագահը:
- Անմիջական աշխատանք ծառայություններ մատուցողների հետ՝ դեպք վարողներ, ԽՀՀ ներկայացուցիչներ և այլն, նրանց կարողությունները սուպերվիզիայի, մենթորության, քուլչինգի կիրառման միջոցով զարգացնելու համար, այդ թվում շարունակական խորհրդատվության տրամադրման միջոցով,
- ՀԿ-պետություն համագործակցության խթանում, համագործակցային այցերի, համատեղ հանդիպումների կազմակերպման միջոցով, այդ թվում տարեկան գիտաժողովների ընթացքում սոցիալական ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերին

մեկ հարկի տակ հավաքելու և ընդհանուր մտահոգության առարկա հանդիսացող խնդիրների քննարկման միջոցով:

### **Համագործակցության ամրապնդումը**

*Համագործակցությունը ազգային մակարդակում.* Այս ժամանակահատվածում Ասոցիացիան շարունակել է իր ներդրումն ունենալ, ինչպես երեխաների խնամքի հաստատությունների վերակազմակերպման, այնպես էլ շարունակել է համագործակցությունը ԱՄՆ-ի հետ համալիր սոցիալական ծառայությունների ներդրման բարեփոխումների ուղղությամբ: Ներկայումս, Ասոցիացիան ակտիվորեն համագործակցում է նախարարությունների, պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների մատուցող կառույցների, ինչպես նաև Ոստիկանության հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Ասոցիացիան նաև համագործակցության հուշագրեր է կնքել հանրապետությունում սոցիալական աշխատողներ պատրաստող երեք հիմնական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ Երևանի պետական համալսարան, Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Շիրակի պետական համալսարան:

*Համագործակցությունը միջազգային հարթակում.* *ա.թ.* մայիս ամսին Ասոցիացիայի երկու ներկայացուցիչներ մասնակցել են Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիայի (ՄԱՄՖ) Եվրոպական տարածաշրջանի Ներկայացուցիչների խորհրդի նիստին, ինչպես նաև ՄԱՄՖ-ի Համաեվրոպական համաժողովին, որի շրջանակներում Ասոցիացիայի ներկայացուցիչները նաև ելույթներ են ունեցել ՀՀ սոցիալական ոլորտում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ: Հանդիպումը թույլ տվեց նաև զարգացնել փոխհարաբերությունները Եվրոպական տարածաշրջանի այլ երկրներ ներկայացնող ասոցիացիաների հետ՝ նախագծելով հետագա համագործակցության հեռանկարները:

Հաշվետու ժամանակահատվածում Ասոցիացիան նաև շարունակել է համագործակցությունը սոցիալական աշխատողներ պատրաստող եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների, մասնավորապես Շվեյցարիայի Բեռնի և Ավստրիայի Լինցի կիրառական գիտությունների համալսարանների հետ, ինչպես կազմակերպելով ամառային դպրոցներ և դասախոսությունների շարքեր սոցիալական աշխատանք մասնագիտությունն ուսումնասիրող ուսանողների, այնպես էլ պրակտիկների համար ՀՀ-ում, այնպես էլ ներգրավելով ուսանողներին տարբեր փոխանակման ծրագրերում (Սոցիալական աշխատանքի միջազգային շաբաթ Ավստրիայում, Լինցի համալսարան, 2016, 2017 թթ.):

Հաշվետու ժամանակահատվածում Ասոցիացիայի կողմից ձեռք չի բերվել որևէ տեսակի գույք կամ հիմնական միջոց:

Շնորհակալություն:

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա ՀԿ  
նախագահ

Միրա Անտոնյան